ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

05 հոկտեմբերի 2011 թվական N 139-Ա

ք.Հրազդան

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 108-Ն որոշման 1-ին կետի 6) ենթակետի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանին հատկացված գումարների հաշվին գ.Մեղրաձորի գյուղամիջյան ճանապարհի կառուցման և վերանորոգման աշխատանքների վերջնական ընդունման և հետագա շահագործման նպատակով Մեղրաձոր համայնքին հանձնելու համար՝

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ

1. Ստեղծել շինարարական աշխատանքների ընդունող և շահագործման հանձնող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Վ. Բակլաչյան հանձնաժողովի նախագահ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ

Ս. Հակոբյան անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Ս. Սաֆարյան անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Ժ.Հարությունյան անդամ - տեխնիկական հսկողությունն իրականացնող «Հանարդնախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Յու. Գրիգորյան անդամ - հեղինակային հսկողություն իրականացնող «Տրանսնախագիծ»ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Օ.Բաղդասարյան անդամ - օբյեկտի կապալառու կազմակերպության՝ «Հրազդանի ՃՇՇՁ» բաց բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Կ. Հովհաննիսյան անդամ - շահագործման ընդունող Մեղրաձոր համայնքի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

2. Հանձնաժողովին՝ տեղերում ուսումնասիրել կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերին ու շինարարական նորմերին և համապատասխան ակտը ներկայացնել 10- օրյա ժամկետում:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ